

ԱՐՏԱՇԵՍ ՏԵՐ-ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ.
ՍՓՅՈՒՌՔԻ ՄԱՍՈՒԼԻ ԳԻՏԱԿԸ ԵՎ ՀԱՆՐԱՅՆԱՑՆՈՂԸ

Բանալի բառեր՝ սփյուռքահայ մամուլ, հայ մամուլի պատմություն, ցուցահանդես, մատենագիտական ցանկ, «Հասկ» հայագիտական տարեգիրք, գրախոսություն, խմբագիր:

Keywords: Armenian diaspora periodicals, Armenian periodicals history, exhibition, bibliographic series, “Hask” Armenian studies yearbook, review, editor.

Արտաշես Տեր-Խաչատուրյանի մասնագիտությունը մեկ բառով հնարավոր չէ բնորոշել: Այն ճշմարտությունը, որ Սփյուռքում մտավորականը միաժամանակ և ուսուցիչ է, և՛ խմբագիր, և՛ պատմության ու գրականության գիտակ ու հետազոտող, հաստատապես վերաբերում է նաև այս բացառիկ անձնավորությանը [Ղազարյան, 2007, 4]: Ծնվել է 1931 թ. հունիսի 16-ին Բեյրութում: Նախահայրենիքը Մշո դաշտի Խաչխալտաղ գյուղն է, «...որ ունեցած է եկեղեցի եւ հոն քահանայագործած է մեծ հայրս՝ Տեր Խաչատուրը, ծանօթ նաեւ Քէոսէ Տէրտէր անունով» [Հասկ հայագիտական տարեգիրք, 1983-1984, 477]: Զավակն է Համագասպ և Ազնիվ Տեր-Խաչատուրյանների. հայրը Խաչխալտաղ գյուղից էր, իսկ մայրը՝ Յրոնքից: Ծագումնաբանական այս տվյալների մասին խոսելը ինքնանպատակ չէ: Արտաշես Տեր-Խաչատուրյանը իր աշխարհի պատմության, ազգագրության, տեղագրության, մշակույթի, սովորությունների ուսումնասիրությունը կարևորող, հավաքող, հետազոտող, իր հետազոտությունների արդյունքները հանրությանը ներկայացնող ու հանրայնացնող հայ մտավորական է, և այս որակները նա դրսևորեց իր գործունեության բոլոր ուղղություններում: Սովորել է Կիլիկիոյ Կաթողիկոսության դպրեվանքում, Հայ ավետարանական կենտրոնական վարժարանում, ապա բարձրագույն կրթություն է ստացել Բեյրութի Ամերիկյան համալսարանում: Զբաղվել է ուսուցչությամբ, դասավանդել է Հալեպի և Բեյրութի մի շարք ուսումնական հաստատություններում՝ գրաբար, հայոց պատմություն, հայ հին և ժամանակակից (արևելահայ և արևմտահայ) գրականություն, հայ մշակույթի պատմություն: Իր հետազոտությունների լեզվի մասին ասում է. «Կը գրեմ հայերէնով, կրնամ արտահայտուիլ անգլերէնով եւ ֆրանսերէնով, սակայն նախընտրած եմ հայերէնը» [Տեր Խաչատուրեան, 2008, 18]: Աշխատել է գաղութի՝ հայապահպանությանն ուղղված կառույցներում նախ որպես անդամ, ապա՝ ուսուցիչ: ՀՄԸՄ-ի անդամ էր, նրան տրված վկայականի մեջ կազմակերպության նպատակների մասին կարդում ենք. «Հ.Մ.Ը.Մ. ի նպատակն է ֆիզիքական առողջ դաստիարակութիւն մը տալով պատանիին՝ սատարել ցեղին բարոյական եւ իմացական բարձրացման: Սովրեցնել անոր ըլլալ չարքաշ եւ ժուժկալ, կարգապահ եւ օրինապահ, արթուն, արագ եւ ճիշտ դատող, ձեռներեց, կորովի, արի, հայրենասէր, զարգացնելով անհատին մէջ պարտականութեան, պատասխանատուութեան եւ պատուի զգացումներ, համերաշխութեան եւ փոխադարձ օգնութեան ոգի...»:

Հենց այս հատընտիր որակներն էլ ձևավորեցին նրա՝ հետազոտող խմբագրի պատասխանատու, ուսուցանող ուսուցչի ծանրակշիռ, լսելի խոսքի ուժը և գիտելիքի ու իմացության լույսը աշակերտներին շռայլորեն փոխանցելու ունակությունը:

Հանդես է եկել մի քանի ծածկանուններով՝ Արտաշես Մանկունի, Արտակ Մանկունի, Արտաշես Խաչատուրեան, Արտաշես Մամիկոնեան:

1950 թ. հրատարակում է «Տարօն» ժողովրդական երգերի ժողովածուն՝ լավագույն արտահայտությունը ժողովրդական բանահյուսության հավաքորդի իր որակների: Առաջաբանի հեղինակ Կարո Մասունին այդ օգտաշատ հատորը կազմողին բնութագրում է հետևյալ բառերով. «... գրական փառքի ճամբայ մը կրնայ դառնալ աշխատասիրող Արտաշես Տեր-Խաչատուրյանին, որ շատ թարմ երիտասարդ մըն է և իր առաջին քայլն է, որ կը նետէ այս գրքոյկով» [Տարօն (Հաւաքածոյ ժողովրդական երգերու), 1950, 6]:

Որպես գրքի և պարբերականի խմբագիր՝ Արտաշես Տեր-Խաչատուրյանը բացառիկ էր իր հետևողականությամբ և անաչառությամբ: Խմբագրել է Շահան Պերպերյանի «Գեղագիտություն և գեղարուեստ» (Պեյրուֆ, 1975) և Ռուբեն Զարդարյանի «Ցայգալոյս»-ը (Պեյրուֆ, 1977, 1994) գրքերը: Այս գույգ հրատարակությունների մատենագիտական ցանկերը Արտաշես Տեր-Խաչատուրյանը կազմել է բժախնդրությամբ և մատենագետի երկյուղածությամբ՝ նշելով, թե «ընթերցողին անթերի գործ մը հրամցուցած ըլլալու գոհունակութիւնը չունինք դժբախտաբար...» [Զարդարեան, 1977, 397], և այդ տարաբախտության պատճառներից մեկը համարում է գրադարաններում հայ գրքի ու մամուլի անունների թերի հավաքածուները: Առաջ է քաշում դրանց ամբողջականության վերականգնման, ապահով պահպանության անհրաժեշտությունը: Այս խնդիրը, ցավոք, արդիական է նաև այսօր, և գրադարանիս առաջնահերթություններից մեկն էլ հատկապես մամուլի թղթային և էլեկտրոնային հավաքածուների ամբողջականության ապահովումն է:

1948 թ. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Գարեգին Հովսեփյանի նախաձեռնությամբ հրատարակվում է «Հասկ» հայագիտական տարեգիրքը: Վեհափառ Հայրապետի «Ծառն արմատով է ծառ, տունն հիմամբ է տուն» կարգախոսը դարձավ տարեգրքի գործունեության նշանաբանը [Հասկ հայագիտական տարեգիրք, 1948, 1]: Նրա վախճանից հետո ևս մեկ համար հրատարակվում է Զարեհ Ա. կաթողիկոսի հետևողականությամբ 1957 թ: Տարեգրքի վերահրատարակությունը նախաձեռնեց Գարեգին առաջին Կաթողիկոսը: «Հայագիտական տարեգիրք... Այս օրերուն Անթիլիասի մէջ... ինքնին հանդուգն նախաձեռնութիւն»։ այսպես է բնորոշում հանդեսի վերահրատարակումը Վեհափառ Հայրապետը: Նոր շրջանի տպագրությունը և խմբագրական աշխատանքները Գարեգին Երկրորդ Կաթողիկոսը վստահեց Արտաշես Տեր-Խաչատուրյանին (խմբագրել է 3 համար): Նոր շրջանի Ա հատորի առաջաբանում Գարեգին Ա-ը, խանդավառված 24 տարի ընդմիջումից հետո պարբերականի վերահրատարակության փաստով, այսպիսի խոսքերով է բնութագրում Տեր-Խաչատուրյանին. «Մեր մասնաւոր գնահատանքը խմբագրական կազմի անդամներուն եւ այդ կազմի Գործադիր Խմբագիրին՝ Պրն. Արտաշես Տեր Խաչատուրեանին, որ հետևողական բժախնդիր ճիգերով յառաջ տարաւ հատորին պատրաստութեան եւ տպագրական սրբագրութեան աշխատանքը» [Նույն տեղում]:

«Հասկ»-ի գրախոսությունների, մահագրությունների և բանասիրական մի շարք բաժինների հեղինակը Արտաշես Տեր-Խաչատուրյանն է՝ գործադիր խմբագիրը: «Մահագրություններ» բաժնում անդրադառնում է նախորդ 2-3 տարիների հայագիտության կորուստներին՝ հաճախ տեքստը պարզ մահախոսականից վերածելով տվյալ անձի գործունեությանը, հատկապես հայագիտության զարգացմանը մատուցած ծառայությունների գնահատության ընդարձակ խոսքի: Այստեղ տեղին է նշել նաև, որ Արտաշես Տեր-Խաչատուրյանը մինչև «Հասկ» հայագիտական տարեգրքում աշխատելը նմանօրինակ հրապարակումներ է ունեցել նաև «Բագին», «Ազդակ» պարբերականների էջերում: Արտաշես Տեր-Խաչատուրյանը մահախոսականը եզրափակում է հանգուցյալի գործերի մատենագիտական ցանկով՝ իբրև նրա վաստակին ուղղված իր գնահատողական խոսքի ապացույց: Անդրադառնում է ոչ միայն աշխարհասփյուռ, այլև հայրենիքում մահկանացուն կնքած հայագետներին և նրանց վաստակին: «Հասկ»-ի երեք համարները, որոնք խմբագրել է Արտաշես Տեր-Խաչատուրյանը, իսկապես հայագիտական տարեգիրք-ժողովածուին արժանի բովանդակություն և ձև ունեն: «Հասկ»-ի էջերում հետազոտական հոդվածներով հանդես են գալիս սփյուռքի և հայրենիքի տարբեր սերունդների հայագետներ, մատենագետներ (Ռաֆայել Իշխանյան, Մուշեղ Իշխան, Պեպո Սիմոնյան, Վահե Օշական, Զավեն Մարյան, Լևոն Խաչիկյան): 3 հատորների ընդհանուր առմամբ 1600 էջերի 1/5 մասը պատկանում են Արտաշես Տեր-Խաչատուրյանի գրչին: Դրանք գրախոսություններ են, մահախոսականներ, գրողների արխիվային նյութերի և նամակների հրապարակումներ:

Հավաքչական, խմբագրական, հետազոտական, լրացուցիչ աղբյուրների ուսումնասիրման ու համադրման արդյունքում ասպարեզի վրա գտնվող հետազոտություններում անճշտությունները բացառելու և գիտական եզրակացությունների հանգեցնելու՝ Արտաշես Տեր-Խաչատուրյանի հմտությունները առավել քան արդյունավետ դրսևորումներ ունեցան հայ մամուլի հետ կապված աշխատանքներում:

1961 թ. հայ ավետարանական քուլեջի շրջանավարտից միության հովանավորությամբ կազմակերպում է Հայ մամուլի ցուցահանդես: Երեք բաժիններով ներկայացված էին պարբերականներ, հայ մամուլի պատմությանը նվիրված ուսումնասիրություններ և հայ նշանավոր խմբագիրների լուսանկարներ: Ցուցանմուշները թիվը հասնում էր 1000-ի: 1963 թ. մամուլի ցուցադրություն է կազմակերպում Հայ լրագրության 170-ամյակին ընդառաջ: Այս երկրորդ ցուցահանդեսի նմուշների թիվը ավելին էր, իսկ այդ առիթով հրատարակված գրքի վերջում տրվող անհատների ու կազմակերպությունների՝ Տեր-Խաչատուրյանին տրամադրած ցուցանմուշների անունների թիվը 960-ից հասել է 1050-ի: Մա վկայում է հայ մամուլի նկատմամբ աճող հետաքրքրության և կազմակերպչի որոնողական ջանքերի հաջողության մասին:

Բոլոր ցուցահանդեսները ուղեկցվում են հայ մամուլի պատմության, դրանում անկյունաքարային նշանակություն ունեցող պարբերականների մասին բանախոսություններով: Արտաշես Տեր-Խաչատուրյանը կարևորում է մամուլի անունների քանակը՝ համեմատելով հայ մամուլի տարբեր ժամանակների հայտնի գիտակների և ուսումնասիրողների՝ Յարոյի, Մկրտիչ Պոտուրյանի, Արտաշես Կարինյանի, Գարեգին Լևոնյանի, Հովհաննես Պետրոսյանի նշած քանակները: Արտաշես Տեր-Խաչատուրյանի եզրակացությունը մեկն է. մամուլի անունների քանակները պարզելու համար «անհրաժեշտ է, որ Հայաստան և Արտասահման գործակցին, նախ հաւաքելու հայ մամուլի բոլոր հաւաքածոները, ապա անոնց ցուցակը կազմելու համար» [Հայ մամուլի ցուցահանդես, 1961, 7]: Նորից առաջ է քաշվում հայ մամուլի հավաքածուների ամբողջականության ապահովման խնդիրը: Արտաշես Տեր-Խաչատուրյանը անչափ կարևորում է մամուլի տպաքանակների բացահայտումը, տարբեր պատճառներով դրանց ավելացումը կամ նվազումը, խմբագիրների գործունեությունը:

Առհասարակ, Արտաշես Տեր-Խաչատուրյանը հայ մշակույթի, կրթության, լեզվի և գրականության զարգացման մեջ մամուլին բացառիկ դերակատարում է վերապահում: Նրա համոզմամբ, մամուլը Հայ աշխարհաբար լեզվի զարգացման օրրան է: Բաղդատելով 19-րդ դ. առաջին և երկրորդ կեսերի մամուլի լեզուն՝ Արտաշես Տեր-Խաչատուրյանը հայերեն աշխարհաբար լեզվի զարգացման, հարստացման գործում մամուլի ունեցած դերը անքննելի է համարում: Մամուլը, ըստ նրա, փորձաքար է սկսնակ հայ գրական մշակների համար, քանի որ գրագետները, գրքերի հրատարակություններից առաջ, իրենց «քերթուածները» տպագրում էին մամուլում, և այստեղ է կազմավորվել նրանց ոճը: «Հայ լրագրությունը այն թանգարանն է, ուր կը քննանան մեր գրողներու մեծագոյն մասին գրութիւնները, և այդ թանգարանէն գիտցան օգտուիլ Նահատակ գրագետներու բարեկամները» [Մեր պարբերականները, 1933, № 2, 141]. նկատի ունի այս մատենաշարով Փարիզում 1930-ական թվականներին նահատակ գրողների երկերի հրատարակությունները: Ինքն էլ ժամանակ առ ժամանակ օգտվել է այդ «թանգարանից»՝ կազմելով Լևոն Շանթի, Շահան Պերպերյանի, Ռուբեն Զարդարյանի, Դանիել Վարուժանի մատենագիտությունները [Մատենագիտութիւն Լեւոն Շանթի, 1969; Շահան Ռ. Պերպերեան (1891-1956): Կենսագրութիւն եւ մատենագիտութիւն, 1969]: Մատենագիտական այս ցանկերը շատ կարևոր են, քանի որ մամուլի մեջ ցրված նրանց գործերը ի մի բերելով է հնարավոր դրանք փրկել մոռացությունից: Մամուլի մյուս կարևոր դերակատարությունը գրականության ժողովրդականացումն է: Գրել-կարդալը, որը մինչ լրագրության ի հայտ գալը գտնվում էր հոգևոր դասի ձեռքում, դարձավ համաժողովրդական սեփականություն, և պարբերական մամուլը դպրոցի հետ միասին կրթության տարածող, քարոզող և հանրահոշակող հանդիսացավ: Սփյուռքում հայապահպանության խարխիսներ են պետք, և Արտաշես Տեր-Խաչատուրյանի կարծիքով հայապահպան զենքերից մեկը՝ դպրոցի ու եկեղեցու կողքին, պետք է լինի և է հայ մամուլը: Նա առանձնահատուկ ուշադրություն է դարձնում 1950-60-ականներին արտասահմանի տարբեր երկրներում հրատարակվող մամուլի անուններին, նրանց պարբերականությանը, տպաքանակներին, խմբագիր-հրատարակիչներին, թղթակիցներին:

Արտաշես Տեր Խաչատուրյանը Սփյուռքի տարբեր պարբերականներում՝ «Տարօնի արծիւ», «Հայ բոյժ», «Հայկազեան Հայագիտական Հանդէս», «Մարգիկ», «Ազդակ», «Հասկ» տարեգիրք, «Շիրակ», «Սփիւռք», «Նայիրի» և այլն, հանդես է եկել հայ կյանքի, ազգագրության, մշակույթի տարբեր կողմերին, առավելապես՝ հայկական մարզական մամուլի, լիբանանահայ մամուլի, սիրիահայ

մամուլի, հայ դաշնակցության մամուլի, Պոլսո «Ազդակ» շաբաթաթերթի մասին, հայ գրքի, տպագրության պատմության, կուսակցական մամուլի և այլ թեմաներով հոդվածներով: Լայնորեն անդրադարձներ է կատարում հայրենիքում և Սփյուռքում հրատարակվող մամուլի մատենագիտություններին: Իրեն հատուկ անաչառությամբ և ուղղախոսությամբ գրախոսություններ է գրում, որոնք ավելին են քան գրախոսությունը: Դրանցում արձանագրվում են այդ հրատարակություններում առկա բազմաթիվ բացթողումներ, սխալներ, անճշտություններ: Միշտ բարձր գնահատելով և արժևորելով մամուլի մատենագետների տքնաջան ու դժվարագույն աշխատանքը՝ Արտաշես Տեր-Խաչատուրյանը այդ անճշտությունների պատճառ է համարում ոչ այնքան մատենագետների բացթողումները, որքան հավաքածուների անլիարժեքությունը:

Տեր-Խաչատուրյանը պարբերական մամուլը համարում էր լեզվի ուսուցման, հղկման, հետազոտական աշխատանքներ կատարելու հիմնությունների ձևավորման, հոդվածների գիտական մակարդակի բարձրացմանն ուղղված հարթակներ: Այդ նպատակով էլ «Հասկ» հայագիտական տարեգրքի հենց առաջին համարում սահմանում է չափորոշիչներ, որով ամրագրում էր հայագիտական հրապարակումների գիտական պատշաճության և լրջության բարձր նշանով: «Գործադիր խմբագիրը յարմար նկատեց տրուած որոշ ուսումնասիրութիւններու պարագային՝ խմբագրական ծանօթութեամբ նախամուտ մը կատարել. այլոց պարագային՝ տալ ամփոփումը եթէ օտար լեզուով են: Որոշ ուսումնասիրութիւններու պարագային՝ յաւելուածի բաժին դնել, վաւերագիրներ ու տողատակեր աւելցնել, զանոնք աւելի ամբողջական դարձնելու մտահոգութեամբ» [Հասկ հայագիտական տարեգրք, 1980, 400]:

Նա անդրադարձներ է կատարում գրողների, գրականության հանրայնացման գործում մամուլի դերակատարությանը: Նա հանգում է այն մտքին, որ հայ մամուլի ավագ պարտականությունը պետք է լինի ճշտորոշել հայ մշակույթի գանձարանի մեջ իր լուսման նետող հայ գրողի յուրաքանչյուր լուսայի արժեքը: Պետք է բացառել գովասանական գրախոսությունները, դրանք պետք է լինեն գրքի գեղագիտական արժանիքների ու թերությունների բացահայտման հարթակ: Միաժամանակ, չգրախոսվող գիրքը չպետք է դիտարկել իբրև նրա ցածրարժեքության ցուցիչ: Այս աշխատանքներին իրենց նպաստը պետք է բերեն հայ մամուլի երկու մասերը՝ առօրյա և պարբերական: Առաջինը պետք է արձանագրի հրատարակությունների փաստերը՝ հպանցիկ անդրադառնալով դրանց, իսկ երկրորդը պետք է լայնորեն անդրադառնա յուրաքանչյուր գրքին: Պարբերական մամուլի վրա պետք է ծանրանա առավելապես գրողի ստեղծագործական արժեքի մասին հանգամանորեն խոսելու, նրա հաջողության չափանիշը սահմանելու պարտականությունը: Պետք է մամուլը իր ձեռքը պահի գրական-հրատարակչական կյանքի զարկերակին, և գրքերի հրատարակություններին պետք է արագորեն հաջորդեն դրանց մասին գրախոսություններն ու քննարկումները մամուլում, որպեսզի «ուղեցոյց հանդիսանան ընթերցողին»: Հակառակ դեպքում, ուշացած գրախոսությունները չեն կարող արդիական լինեն և կարող է հանդիպեն «սառը վերաբերմունքի» [Տեր-Խաչատուրեան, 1954, № 47, 3]:

Դեռևս 1962 թ. «Բազին»-ում հրապարակած «Մշակույթային մտահոգություններ» հոդվածում նա խոսում է ոչ միայն գրողների արխիվների, անտիպների, այլև մամուլի անունների հավաքման և ամբողջացման կարևորության մասին [Տեր-Խաչատուրեան, 1962, № 2]: Ապա Հայաստան կատարած այցելությունից հետո, 1980 թ. Արտաշես Տեր-Խաչատուրյանը դարձյալ ահագանգում է հայ մամուլի պահպանության հետ կապված մարտահրավերների մասին և պահպանության խնդիրներին զուգահեռ առաջ է քաշում տեր-տնօրենների, խմբագիրների, արտոնատերերի, տպարանների անունները վերհանելու, «...պարզելու վերոնշյալ անձերի կամ նրանց հարազատների տվյալները և եթե հավաքածուն չի պահպանվել, «առնվազն տրամադրելի թիւեր ձեռք գցել...» [Տեր-Խաչատուրեան, 1980, № 8, 47]: Արտաշես Տեր-Խաչատուրյանը դա հնարավոր է համարում ազգային առաջնորդարանների, եկեղեցական և ազգային այլ հաստատությունների ու կազմակերպությունների «թանկագին» օժանդակությամբ: Սա խիստ կարևոր էր՝ մամուլի պատմության մեջ այդ փաստերը մոռացության չմատնելու տեսակետից: Օրախնդիր է համարում նաև օտար մամուլի մեջ հայոց վերաբերյալ բոլոր հոդվածների հավաքումն ու Հայաստան փոխադրումը [Նույն տեղում]:

Անփոփելով, մեկ անգամ ևս փաստենք, որ Արտաշես Տեր-Խաչատուրյանը անուրանալի ծառայություններ ունի հայ մամուլի հավաքման, նոր անունների բացահայտման, հետազոտման, հանրայնացման և հանրահռչակման գործում: Այսօր Հայաստանի ազգային գրադարանում նրա մատենագիտական ցանկի կազմման աշխատանքներ են կատարվում՝ Մատենագիտություն մատենագետի մասին: 2019-2020 թթ. ՀԱԳ-ի անձեռնմխելի բաժնում ստեղծվեց Արտաշես Տեր-Խաչատուրյանի անհատական հավաքածուն, ավելի քան 200 արժեքավոր գիրք ու պարբերական. դրանց մի մասը գրադարանի հավաքածուում բացակայում էր:

SUMMARY

Artashes Ter-Khachaturyan has significant support in assembling the Armenian periodicals, identifying new titles, researching, publicizing and promoting them. He demonstrated all the qualities specific to the intellectuals of the diaspora: a patient teacher, a skilled organizer and editor, an impartial researcher, an accepted public figure, a visible person who establishes and develops ties with the Motherland. Today, the National Library of Armenia is working on compiling his bibliographic series: Bibliography about the librarian. A small part of Artashes Ter-Khachaturyan's personal collection is preserved here: more than 200 valuable books and periodicals. some of them were missing in the library collection.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Արտաշես Տեր Խաչատուրեան. Մարդը եւ գործը / Կազմ. և խմբ. Յ. Յովհաննէսեան, Պէրուրթ, տպ. Համազգայինի «Վահէ Սէթեան», 2008, 330 էջ:
2. Գարեգին կաթողիկոս: Հրատարակչութեան կողմից // Հասկ հայագիտական տարեգիրք, 1948, էջ 1:
3. Զարդարեան Ռ. Յայգալոյս, Անթիլիաս, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1977, 447 էջ:
4. Հայ մամուլի ցուցահանդես (1794-1961), Պէրուրթ, տպ. Ատլաս, 1961, 21 էջ:
5. Ղազարյան Հ. Մփյուռքի գրադարանը լոկ գրադարան չէ // Հոգևոր հայրենիք, 2007, № 9, սեպտ., էջ 4:
6. Պէրպէրեան Շ. Գեղագիտութիւն և գեղարուեստ / Խմբ.՝ Ա. Տէր Խաչատուրեան, Պէրուրթ, G. Doniguian & Fils, 1975, 414 էջ:
7. Տարօն (Հաւաքածոյ ժողովրդական երգերու) / Հաւաքեց եւ կազմող՝ Ա. Տէր Խաչատուրեան, Պէրուրթ, տպ. Յովեա, 1950, 120 էջ:
8. Տէր-Խաչատուրեան Ա. [Ազդ] // Հասկ հայագիտական տարեգիրք, 1980, էջ 400:
9. Տէր-Խաչատուրեան Ա. Հայ գրողն ու մամուլը // Նայիրի, 1954, № 47, 25 յուլիսի, էջ 3:
10. Տէր-Խաչատուրեան Ա. Հայ մշակութային գանձերու փրկութեան եւ պահպանման հրամայականը // Բագին, 1980, № 8, էջ 37-53:
11. Տէր Խաչատուրեան Ա. Հայկական սովետական հանրագիտարան // Հասկ հայագիտական տարեգիրք, Պէրուրթ, 1983-1984, 471-481 էջ:
12. Տէր Խաչատուրեան Ա. Մատենագիտութիւն Լէւոն Շանթի, Պէրուրթ, ա. հ., 1969, 49 էջ:
13. Տէր Խաչատուրեան Ա. Մեր պարբերականները // Վէմ, Փարիզ, 1933, № 2, էջ 141, (Գիրք եւ մամուլ):
14. Տէր-Խաչատուրեան Ա. Մշակութային մտահոգութիւններ // Բագին, 1962, № 2, էջ 65-67: